ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 17.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.02.2022թ. թիվ 26/26-1/2618-2022 գրությամբ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/602-2022 գրության հիման վրա, 15.02.2022թ. թիվ 26/26-1/2618-2022 գրությամբ նախաձեռնել է «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմությունը

12.11.2021թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ինտ Մենտաս գրուփ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև, կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/16-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է մինչև 10.12.2021թ.-ը Պատվիրատուին մատակարարել թվով 160 հատ «մարտկոց 3v (CR2) (ԱԿՄ 3v (CR2))» (այսուհետ՝ Ապրանքներ): Նպատակ ունենալով կատարել Պայմանագրով ստանձնած Ապրանքների մատակարարման պարտավորությունը՝ Ընկերությունը 10.12.2021թ.-ին Պատվիրատուին մատակարարել է մարտկոցներ, որոնք ըստ Պատվիրատուի կողմից տրված 10.12.2021թ.-ի նյութատեխնիկական միջոցների վերադարձման թիվ 7 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) հետևյալն են «մարտկոց 3v (CR2) (ԱԿՄ 3v (CR2))»: Նույն օրը Պատվիրատուն մատակարարված ապրանքները Արձանագրությամբ վերադարձրել է Ընկերությանը, այն պատճառաբանությամբ, որ մարտկոցները մեկ անգամյա են և ենթակա չեն լիցքավորման, այնինչ պայմանագրով Պահանջվել է բազմակի լիցքավորման մարտկոցներ: Պատվիրատուն վերադարձված մարտկոցները փոխարինելու համար ողջամիտ ժամկետ չի սահմանել, Ընկերությունը գրությամբ դիմել է Պատվիրատուին և խնդրել է տրամադրել լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ ապրանքների նոր խմբաքանակ ներկրելու և այն մատակարարելու համար, սակայն Պատվիրատուն գրությանը չի պատասխանել և 04.02.2022թ-ին gnumner.am կայքում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

Գործի փաստական հանգամանքները.

2.1. Ընկերությունը պարտավորվել է մինչև 10.12.2021թ.-ը Պատվիրատուին մատակարարել թվով 160 հատ «մարտկոց 3v (CR2) (ԱԿՄ 3v (CR2)):

2.2. Ընկերությունը 10.12.2021թ.-ին Պատվիրատուին մատակարարել է մարտկոցներ, որոնք ըստ Պատվիրատուի կողմից տրված 10.12.2021թ.-ի նյութատեխնիկական

միջոցների վերադարձման թիվ 7 արձանագրության հետևյալն են «մարտկոց 3v (CR2) (ԱԿՄ 3v (CR2))»:

2.3. 10.12.2021թ.-ին Պատվիրատուն մատակարարված ապրանքները Արձանագրությամբ վերադարձրել է Ընկերությանը այն պատճառաբանությամբ, որ մարտկոցները մեկ անգամյա են և ենթակա չեն լիցքավորման, ինչպես պայմանագրով Պահանջվել է բազմակի լիցքավորման մարտկոցներ:

2.4. Պատվիրատուն վերադարձված մարտկոցները փոխարինելու համար ողջամիտ ժամկետ չի սահմանել, Ընկերությունը գրությամբ դիմել է Պատվիրատուին և խնդրել է տրամադրել լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ ապրանքների նոր խմբաքանակ ներկրելու և այն մատակարարելու համար, սակայն Պատվիրատուն գրությանը չի պատասխանել և 04.02.2022թ.-ին gnumner.am կայքում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

3. Գործի փաստական և իրավական հիմքերը.

3.1. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝ 1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն, Գնորդն իրավունք ունի՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման

ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2.1.7 համաձայն, Գնորդն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Վերոգրյալից հետևում է, որ եթե պայմանագրի շրջանակներում մատակարարվել են պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքներ, ապա գնորդի մոտ պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունք կարող է ծագել, երբ այդ ապրանքները չեն կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում: Այսինքն, նշյալից հետևում է, որ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքներ մատակարարվելու դեպքում, գնորդը պետք է տրամադրի մատակարարին իր համար ընդունելի և դրա հետ մեկտեղ ողջամիտ ժամկետ՝ այդ ապրանքները պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքներով փոխարինելու համար: Եվ եթե պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները այդ ժամկետում չեն փոխարինվում պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքներով, ապա գնորդի մոտ ծագում է պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունք:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից՝ 10.12.2021թ.-ին Ընկերությունը մատակարարել է Պատվիրատուին թվով 160 հատ «մարտկոց 3v (CR2) (ԱԿՄ 3v (CR2))», որոնք Պատվիրատուն Արձանագրությամբ վերադարձրել է Ընկերությանը, այն պատճառաբանությամբ, որ մարտկոցները չեն համապատասխանում Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին: Մարտկոցները վերադարձնելուց հետո, Պատվիրատուն առանց Պայմանագրին չհամապատասխանող մարտկոցները Պայմանագրին համապատասխանող մարտկոցներով փոխարինելու համար ժամկետ

սահմանելու՝ Պայմանագիրը միակողմանի լուծել է: Այսինքն, Պայմանագիրը լուծվել է խախտելով Պայմանագրի 2.1.2 կետի «բ» և 2.1.7.1 կետի «ա» պարբերությունները ու սխալ կիրառելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» պարբերությունը:

Անհրաժեշտ է նշել, որ Պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը Տեղեկագրում հրապարակվել է 04.02.2022թ.-ին, այսինքն մատակարարված մարտկոցները վերադարձնելուց հետո 54 օր անց: Մինչև Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Տեղեկագրում հրապարակելը՝ Պատվիրատուից ապրաքների փոխարինման վերաբերյալ ծանուցում չստանալով, Ընկերությունը գրությամբ դիմել է Պատվիրատուին, խնդրելով՝ տրամադրել լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ ապրանքների նոր խմբաքանակ ներկրելու և այն մատակարարելու համար, սակայն Պատվիրատուն գրությանը չի պատասխանել:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ եթե Պատվիրատուն չցուցաբերեր անգործություն և Ընկերությանը տրամադրեր ողջամիտ ժամկետ, ապա վերջինս հնարավորություն կունենար կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը, քանի որ մատակարարված մարտկոցները վերադարձնելու և պայմանագիրը լուծելու միջև ընկած ժամանակահատվածը 54 օր է իսկ մատակարարված ապրանքները փոխարինելու համար Ընկերությանը անհրաժեշտ էր ընդամենը 14 օր: ՈՒստի, եթե մատակարարված մարտկոցները փոխարինելու համար վերջինիս տրամադրվեր 54 օր, ապա Ընկերությունը կկատարեր Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները և չէր հայտնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առաջ:

4. Պահանջը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝

ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/61 ծածկագրով ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/61 ընթացակարգի քննության նպատակով 18.02.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ,

ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը գործի նյութերին ծանոթանալու և գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/602-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 12.11.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. փետրվարի 3-ին միակողմանի մասնակի լուծել է ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 04.02.2022թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/61 ընթացակարգի քննության նպատակով 18.02.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՍՑ-ՆԳ-2022/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 12.11.2021թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1.1 հավելվածի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը նախատեսվում է 2021թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.:

3. 10.12.2021թ. Պատվիրատուի կողմից կազմվել է նյութատեխնիկական միջոցների վերադարձման թիվ 7 արձանագրությունը հետևյալ բովանդակությամբ.

«Համաձայն պայմանագրի ՀՀ ՊՆ 79512 զորամաս մատակարարվել է՝ մարտկոց 3V (CR2)(ԱԿՄ 3V(CR2)))»-160 հատ

Մարտկոց (CR2)(ԱԿՄ 3V(CR2)))», չի համապատասխանում տեխնիկական բնութագրի, մասնավորապես՝ Մարտկոցները 1 անգամյա են և ենթակա չեն լիցքավորման (պայմանագրով նախատեսված է բազմանգամյա լիցքավորման):

Եզրակացություն

Վերը նշված նյութական միջոցը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին կից տեխնիկական բնութագրի պահանջներին ինչի հետևանքով մատակարարված խմբաքանակը վերադարձվում է մատակարարին»:

4. 27.12.2021թ. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 8 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ.

«Նշումներ անհամապատասխանության մասին՝ համաձայն 12.11.2021թ. N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 պայմանագրի 160 հատ (CR2)(ԱԿՄ 3V(CR2)) մարտկոցների մատակարարումը չի իրականացված՝ մատակարարվել են պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, որը չի ընդունվել ընդունող հանձնաժողովի կողմից:

Ըստ գնման ժամանակացույցի 14.12.2021թ. դրությամբ չմատակարարված 160 հատ (CR2)(ԱԿՄ 3V(CR2)) մարտկոցների ուշացրած օրերը կազմում են 2 աշխատանքային օր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

5. «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին ուղղված 04.02.2022թ. թիվ ՊՆԱ/2-161 ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 12.11.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 գնման պայմանագրի շրջանակներում «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 160 հատ մարտկոց (CR2)(ԱԿՄ 3V(CR2)), սակայն մատակարարված մարտկոցները չեն համապատասխանել պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին (ենթակա չեմ եղել լիցքավորման, այն ինչ պայմանագրով նախատեսված է եղել լիցքավորվող):

Հիմք ընդունելով գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմատիվ ակտերի պահանջներն ու պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետի բ ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. փետրվարի 3-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը»...:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 04.02.2022թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2022թ. թիվ 26/26-1/2618-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/602-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 12.11.2021թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1.1 հավելվածի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը նախատեսվում է 2021թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.:

10.12.2021թ. Պատվիրատուի կողմից կազմվել է նյութատեխնիկական միջոցների վերադարձման թիվ 7 արձանագրությունը հետևյալ բովանդակությամբ.

«Համաձայն պայմանագրի ՀՀ ՊՆ 79512 զորամաս մատակարարվել է՝ մարտկոց 3V (CR2)(ԱԿՄ 3V(CR2)))»-160 հատ

Մարտկոց (CR2)(ԱԿՄ 3V(CR2)))», չի համապատասխանում տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ Մարտկոցները 1 անգամյա են և ենթակա չեն լիցքավորման (պայմանագրով նախատեսված է բազմանգամյա լիցքավորման):

Եզրակացություն

Վերը նշված նյութական միջոցը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին կից տեխնիկական բնութագրի պահանջներին ինչի հետևանքով մատակարարված խմբաքանակը վերադարձվում է մատակարարին»:

Ընկերությունը 17.12.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ ՊՆ և մեր Ընկերության միջև վավերացված ԳՀԱՊՁԲ-21-4/16-2» պայմանագիր, 10.12.2021թ. Ընկերությունը մատակարարել է մարտկոցներ:

Պայմանագրով սահմանված մարտկոցների երկու չափաբաժիններով մատակարարված ապրանքը ընդունվել ՊՆ համապատասխան ստորաբաժանման կողմից, իսկ մեկ չափաբաժինը (160 հատ մարտկոց, ընդհանուր գումարը՝ 292 800 ՀՀ դրամ) չի ընդունվել, քանի որ այն իր տեխնիկական պարամետրերով չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Մենք ձեռնամուխ ենք եղել մարտկոցների նոր խմբաքանակ հրատապ ներմուծելու և մատակարարելու գործընթացին: սակայն այն սպեցիֆիկ ապրանքատեսակ է, չկա հայաստանյան և նույնիսկ ռուսաստանյան շուկաներում, ինչը հնարավորություն կտար մեզ հրատապ իրականացնելու փոխարինման գործընթացը: Մարտկոցների նոր խմբաքանակը մենք ձեռք ենք բերել ԱՄՆ-ում և քանի որ նրա բաղադրությունը լիթիումային է, ուստի առկա են որոշակի դժվարություններ օդային արագ բեռնափոխադրում իրականացնելու հարցում: Ապրանքատեսակի ներկրումը կտևի որոշակի ժամանակահատված:

Հայցելով Ձեր ներողամտությունը, խնդրում եմ տրամադրել լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ ապրանքատեսակի նոր խմբաքանակը ներկրելու և այն մատակարարելու համար:

Սույնով հայտնում եմ նաև պատրաստակամությունս, տրամադրելու մեր Ընկերության կողմից լրացուցիչ բանկային երաշխիք՝ Ձեր կողմից վճարումն իրականացնելու նպատակով, միչև ապրանքի մատակարարման ավարտը»:

27.12.2021թ. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 8 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ.

«Նշումներ անհամապատասխանության մասին՝ համաձայն 12.11.2021թ. N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 պայմանագրի 160 հատ (CR2)(ԱԿՄ 3V(CR2)) մարտկոցների մատակարարումը չի իրականացված՝ մատակարարվել են պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, որը չի ընդունվել ընդունող հանձնաժողովի կողմից:

Ըստ գնման ժամանակացույցի 14.12.2021թ. դրությամբ չմատակարարված 160 հատ (CR2)(ԱԿՄ 3V(CR2)) մարտկոցների ուշացրած օրերը կազմում են 2 աշխատանքային օր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին ուղղված 04.02.2022թ. թիվ ՊՆԱ/2-161 ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 12.11.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 գնման պայմանագրի շրջանակներում «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 160 հատ մարտկոց (CR2)(ԱԿՄ 3V(CR2)), սակայն մատակարարված մարտկոցները չեն համապատասխանել պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին (ենթակա չեն եղել լիցքավորման, այն ինչ պայմանագրով նախատեսված է եղել լիցքավորվող):

Հիմք ընդունելով գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմատիվ ակտերի պահանջներն ու պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. փետրվարի 3-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը»...:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 04.02.2022թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.2 ենթակետի բ) պարբերության համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Այսպիսով՝ գործով առկա նյութերի համաձայն՝ Պատվիրատուն Պայմանագիրը լուծելու մասին ծանուցմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում մատակարարված 160 հատ մարտկոցները չեն համապատասխանել պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի բ) ենթակետով սահմանված պահանջը՝ լուծել է Պայմանագիրը, այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագիրը վերը նշված հիմքով լուծելը իրավաչափ է այն պայմաններում, երբ Պատվիրատուի կողմից կիրառվել է Պայմանագրի 2.1.2 ենթակետի բ) պարբերությամբ սահմանված պահանջը, այն է՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ չընդունել ապրանքն՝ ***իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ***, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ գործում առկա չէ 27.12.2021թ. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տրված բացասական եզրակացության հիման վրա Ընկերությանը Պայմանագրի 2.1.2 ենթակետի բ) պարբերության համաձայն անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետի տրամադրման վերաբերյալ որևէ փաստ: Ընդ որում՝ հարկ եմ համարում արձանագրել, որ

10.12.2021թ. Պատվիրատուի կողմից կազմված նյութատեխնիկական միջոցների վերադարձման թիվ 7 արձանագրությամբ Պատվիրատուն՝ արձանագրելով անհամապատասխանություն, նշել է միայն, որ Ընկերության կողմից մատակարարված խմբաքանակը վերադարձվում է մատակարարին, այսինքն՝ վերը նշված արձանագրությունը ևս չի պարունակում որևէ տեղեկատվություն անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ Ընկերությանը տրամադրելու վերաբերյալ:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, ինչպես նաև հիմք ընդունելով սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայությունը՝ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը նման պայմաններում չի կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.02.2022թ. թիվ 26/26-1/2618-2022 գրությամբ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**